

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՀԻՆԳԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 28-ին, կիրակի, առավոտյան ժամը 11-ին, Մայր Տաճարում մատուցվում է սուրբ պատարագ, վերածնված հայ ժողովրդի ազգային պետական մեծ տոնի երջանիկ առիթով։ Պատարագում է հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։

Սուրբ պատարագին ներկա է Ամենայն Հայոց Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի, կատարվում է է կառավարական մաղթանք, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ։

Արարողությունից առաջ հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը քարոզում է օրվա տոնի ազգային, հայրենասիրական նշանակության մասին։

Նոյեմբերի 29-ին, երկուշաբթի, հայրենիքի մեծ տոնի բարեբաստիկ և ուրախ առիթով, փակ է Հոգևոր ճեմարանը։

Առավոտյան ժամը 12-ին, ճեմարանի հանդիսասրահում, տեղի է ունենում հանդիսավոր նիստ, նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 45-ամյակին։

Հանդիսության նախագահում է Վեհափառ Հայրապետը։

Ներկա են Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, վանքի պաշտոնեությունը։

Հանդիսությունն սկսվում է Հայկական ՍՍՌ Պետական հիմնի նվագով։

Վերատեսուչ հոգեշնորհ Տ. Ներսես ծայրագույն վարդապետ Պոզապալյանը կատարում է հանդիսության բացումը, վեր հանելով օրվա տոնի ազգային, պետական նշանակությունը հայ ժողովրդի կյանքում։

Ճեմարանի երգչախումբը հաջողությամբ կատարում է «Ծաղկի՛ր, ազատ իմ հայրենիք», «Հայրենիքում», «Արևն ելավ, զեյթուն-ցիներ» խմբերգերը։

Գ լսարանի ուսանող բարեշնորհ Գրիգոր սարկավագ Բունիաթյանը արտասանում է Սիլվա Կապուտիկյանի «Մտորումներ ճանապարհի կեսին» բանաստեղծությունը, իսկ բարեշնորհ Եղիշե սարկավագ Բաղրամյանը՝ Ն. Զարյանի «Վերածնունդ»-ը, խոր ապրումներով և հուզումով։

Գ դասարանի ուսանող Արարատ Գալըստյանը դաշնամուրի վրա հաջողությամբ կատարում է Բեթհովենի Առաջին սոնատայի առաջին մասը։

Հանդիսության գլխավոր բանախոսն էր Հոգևոր Ճեմարանի հայոց լեզվի և գրականության դասախոս Պարգև Շահբազյանը, որը հանդես է գալիս Հայաստանում սովետական կարգերի հաստատման 45-ամյակին նվիրված բովանդակալից և կուռ զեկույցով։

Հայրապետական Իր պատգամի վերջավորության, Վեհափառ Հայրապետն օրհնում է մեր վերածնված Մայր Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, մեր շինարար և խաղաղասեր, ստեղծագործ ժողովրդին, բարեմաղթելով, որ խաղաղություն լինի հայ երդիկների տակ և համայն աշխարհում։

Հանդիսությունը վերջանում է ազգիս հայրենասեր Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով։